

Էլենե Չաջանիձե

*Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան
փոխհարաբերությունների կենտրոն*

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

Տվյալ հոդվածի նպատակն է ընթերցողի ուշադրությունը մեկ անգամ ևս կենտրոնացնել քաղաքացիական ինտեգրման հարցի և ինտերմշակութային կրթության կարևորության վրա: Հոդվածում ներկայացված են Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների քաղաքացիական ինտեգրման հիմնախնդիրները: Քննարկված են ինտեգրմանը խանգարող գործոնները և դրանց հաղթահարման ուղիները: Հոդվածն ընթերցողին կծանոթացնի նաև Վրաստանում ինտերմշակութային կրթության և սոցիալական ինտեգրման հրատապությունը և այս տեսակետից իրականացված ակտիվությունները: Հոդվածի վերջում ընթերցողին ներկայացնում ենք ոչ վրացալեզու ուսանողների տեսակետների վերլուծությունը՝ նրանց Վրաստանում ինտեգրման վերաբերյալ և տվյալ դժվարությունների հաղթահարման ուղիները:

Ներածություն

Վրաստանը բազմազգ և բազմամշակույթ երկիր է: 2002 թվականի մարդահամարի համաձայն, բնակչության 16,2 %-ն էթնիկ վրացի չէ, դրանց մեծ մասը հայեր և ադրբեջանցիներ են (6,5% - 5,7%): Վրաստանում բնակվում են նաև քրդեր, եզդիներ, հրեաներ, հույներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ, համեմատաբար պակաս քանակով: Տարբեր էթնիկ ծագումը հարուցում է լեզվական, կրոնական և մշակութային տարբերակվածություն: Յուրաքանչյուր էթնիկ խումբ հանդիսանում է յուրօրինակ մշակութային միավոր, որին բնորոշ է նաև տարբերվող աշխարհայացք: Էթնիկ խմբերի մշակույթը և ավանդույթներն ինքըստինքյան հետաքրքիր են և գնահատելի, թեպետ ամենօրյա կարիքներն օրակարգ են առաջ քաշում նաև ազգային մեծամասնության հետ ինտեգրման անհրաժեշտություն:

Հասարակական ինտեգրման գործընթացում կարևորագույն դեր է շնորհվում միջմշակութային զգայունության զարգացմանը, ինչը ենթադրում է մշակույթների միջև հանդուրժողականության ձևավորում, բազմակողմանի մտապատկեր, ընդհանուր արժեքների հանդեպ հարգանք և կոնֆլիկտային իրավիճակներից խուսափում:

Հանդուրժողական վերաբերմունքի զարգացման և քաղաքացիական ինտեգրմանը նպաստելու տարբեր մեխանիզմներ գոյություն ունեն: Դրանցից ամենակարևոր և արդյունավետ միջոցը քաղաքացիական ինտեգրումն է կրթության ճանապարհով: Քաղաքացիական ինտեգրման հարցը Վրաստանի համար, ելնելով առկա էթնիկ պատկերից, առանձնապես հրատապ է: Վերջին տարիներին առանձնահատուկ հրատապություն է ձեռք բերել նաև ինտերմշակութային կրթությունը: Քաղաքացիական ինտեգրմանը, նախ՝

աջակցում է Վրաստանի պետությունը, ինչն արտացոլված է նաև պետության Սահմանադրության մեջ:

Վրաստանի օրենսդրությունը ազգային փոքրամասնությունների ինտեգրման մասին

Վրաստանի Սահմանադրությունը բոլոր քաղաքացիներին, անկախ ազգային պատկանելությունից, շնորհում է ազատ սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման իրավունք (Վրաստանի Սահմանադրություն, գլուխ 4, հոդված 129): Վրաստանի Օրենքը պաշտպանում է ազգային փոքրամասնությունների իրավունքը՝ գրել և խոսել մայրենի լեզվով: Ավելին, Ընդհանուր կրթության օրենքում ընդգծված է, որ «Վրաստանի քաղաքացիները, որոնց համար վրացերենը մայրենի լեզու չէ, իրավունք ունեն լրիվ ընդհանուր կրթություն ստանալ իրենց մայրենի լեզվով, Ազգային ուսումնական պլանին համապատասխան, օրենսդրությամբ սահմանված կարգով» (հոդված 4, կետ 3): Իսկ նույն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն. «Դպրոցը պարտավոր է օժանդակել աշակերտների, ծնողների ուսուցիչների միջև հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի պահպանմանը, անկախ նրանց սոցիալական, էթնիկական, կրոնական, լեզվական և աշխարհայացքային պատկանելությունից»: Բացի այդ, Վրաստանի Ընդհանուր կրթության մասին օրենքը պաշտպանում է փոքրամասնության իրավունքը, «օգտվել մայրենի լեզվից, պահպանել այն և արտահայտել իրենց մշակութային պատկանելությունը»:

2009 թվականի մայիսի 8-ին Վրաստանի Կառավարության կողմից հաստատված Քաղաքացիական

ինտեգրման հայեցակարգը նպատակադրում է «Հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի միջավայրի ստեղծում Վրաստանում բնակվող բոլոր անձանց միջև, Վրաստանի բոլոր քաղաքացիների ապահովում քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավունքներից օգտվելու համար», նաև «պարտադիր պայմանների ստեղծում ազգային փոքրամասնությունների մշակութային պահպանման և զարգացման համար, նրանց ինքնության հիմնական տարրերի, մասնավորապես, կրոնի, լեզվի, ավանդույթների և մշակութային ժառանգության պահպանման համար» (Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգ, 2-րդ գլուխ, 2009): Վրաստանի պետությունը ոչ միայն Սահմանադրությամբ է աջակցում ազգային փոքրամասնությունների կրթության և ինտեգրման հարցին, այլև 2010 թվականից ակտիվ կերպով սկսում է երկլեզվյա ծրագրեր ներդնել ոչ վրացալեզու դպրոցներում:

Բացի այդ, ներդրվել են կրթական և մշակութային բնույթի նախագծեր, որոնց նպատակն է ազգային փոքրամասնությունների ինտեգրում երկրի բնակչության մեծամասնությանը: Պետական քաղաքականության նախաձեռնությամբ սկսվել է պետական լեզվին աջակցող բազմալեզու ծրագրերի իրականացում: Կրթության նախարարությունը պլանավորել է և հատուկ երկլեզվյա ծրագրի ուսուցիչների համար իրականացրել վարժանքներ, նրանք վերապատրաստվել են: Նախարարության կողմից իրականացված միջոցառումներից բացի, Վրաստանում գործող ոչ կառավարական

կազմակերպություններն ազգային փոքրամասնությունների համար կազմում են ծրագրեր, որոնք նպաստում են նրանց քաղաքացիական ինտեգրմանը և կրթությանը: Օրինակ, Թբիլիսիում գործում է «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնը» (CCIR), որի ջանքերով ծրագրեր են իրականացվում ազգային փոքրամասնությունների կրթության և ինտեգրման համար: Կազմակերպությունում պատրաստվել են հատուկ դասագրքեր ոչ վրացալեզու աշակերտների համար («Մախմեդ»), նաև պատրաստվել են վրաց-ադրբեջաներեն և վրաց-հայերեն բառարաններ, որոնք կօժանդակեն ոչ վրացալեզու աշակերտներին վրաց լեզու սովորելու հարցում: «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնը» 2011 թվականից նաև իրականացնում է նախագիծ «Դարձի՛ր համամասնակից», որի նպատակն է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների քաղաքացիական գիտակցության բարձրացումը և հասարակական կյանքում նրանց ակտիվ մասնակցությանը նպաստումը:

Բացի այս կազմակերպությունից, ազգային փոքրամասնությունների ինտեգրման հարցերի վրա ակտիվորեն աշխատում է է Սամցխե-Ջավախքում ոչ կառավարական կազմակերպություն «Ժողովրդավար մեխիերի միությունը», որն իրականացրել է տեղեկատվական բնույթի և ազգային ինքնագիտակցության բարձրացմանը միտված ծրագրեր: Տվյալ կազմակերպությունն իրականացնում է նաև մեծահասակների կրթության ծրագիր:

Կրթական հարցերին զուգահեռ, ակտիվ աշխատանք է ընթանում նաև մշակույթի զարգացման ուղղությամբ: 2010 թվականին, Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության աջակցությամբ, ֆինանսավորվեցին Ալ.Գրիբոեդովի անվան ռուսական, Հեյդար Ալիևի անվան ադրբեջանական և Պետրոս Ադամյանի անվան հայկական թատրոնները: Նրանք ներկայացումներ են տվել ինչպես տեղի բնակչության համար, այնպես էլ հյուրախաղային ծրագիր են ներկայացրել Հայաստանում և Ադրբեջանում: Նույն թվականին, պետական ֆինանսավորման և աջակցության հետևանքով, Դավիթ Բաազովի անվան Վրաստանի հրեաների պատմա-ազգագրական թանգարանը ցուցահանդես է կազմակերպել և հրատարակել գիտաժողովի նյութեր «Կովկասի հնագիտությունը, ազգագրությունը, բանահյուսությունը»: Մշակույթային աշխատանք է ընթանում նաև երաժշտական դպրոցներում և մշակույթի կենտրոններում: 2011 թվականի հունիսի 11-ին քաղաք Մառնեուլիում անցկացվեց բազմազգ երաժշտական փառատոն՝ «Մեկ երկնքի տակ» անվանումով:

Վերջին տարիներին հաճախացել է ազգային փոքրամասնությունների ավանդական տոների նշումը: 2011 թվականին կազմակերպվեցին Ադրբեջանի մշակույթի օրեր Բոլնիսիում, իսկ Մառնեուլիում՝ Նովրուզ Բայրամի տոնը (Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման հայեցակարգի և գործողությունների պլանի կատարման մշտադիտարկման արդյունքները: 2010/2011): Նշված մշակույթային բնույթի ակտիվությունները նշանակալի են քաղաքացիական ինտեգրման և միջմշակութային

երկխոսությանը նպաստելու, նաև ազգային փոքրամասնությունների մշակութային և ազգային ինքնության պահպանման համար: Այս նույն նպատակով, 2011 թվականին գործողությունների պլանի մեջ ընդգրկվեցին Ախալքալաքիում, Ախալցխիսեում և Նինոծմինդայում ակումբային հաստատությունների և արվեստի դպրոցների զարգացմանը նպաստող միջոցառումներ:

Ազգային փոքրամասնությունների մշակույթի օրերի և ավանդական տոների նշումը, մշակութային և տեղեկատվական տեսակետից, կհարստացնի վրացական միջավայրը, կնպաստի վրացալեզու բնակչությանը հարևանությամբ ապրող էթնիկ փոքրամասնությունների ազգային ավանդույթների ծանոթացմանը, իսկ նրանց փոխադարձ վերաբերմունքին կավելացնի հարգանք և կարեկցանք: Մինևույն ժամանակ, կխուսափենք էթնիկ փոքրամասնությունների դռնփակությունից և մեկուսացումից: Մշակութային և լեզվական ազատությունը, ազգային մեծամասնության կողմից նրանց ավանդույթների հարգանքը կհարուցի պատասխան արձագանք, ինչն ի վերջո կնպաստի էթնիկ խմբերի քաղաքացիական և մշակութային ինտեգրմանը Վրաստանում:

Մշակույթի միջոցով ինտեգրումը էթնիկ փոքրամասնությունների համար քաղաքացիական ինքնագիտակցության բարձրացման և ազգային ինքնության պահպանման միջոցներից մեկն է: Բացի այդ, նշանակալի է էթնիկ փոքրամասնությունների միջմշակութային կրթության միջոցով ինտեգրումը Վրաստանում: Ինչպես արդեն նշվեց վերևում, այս ուղղությամբ Վրաստանում բազմաթիվ միջոցառումներ

են անցկացվում: Ինտերմշակութային կրթության տեսանկյունից կարևորագույն նախաձեռնություններից մեկը պետության «Արտոնյալ քաղաքականության» ներդրումն է, որը միտված է ոչ վրացալեզու ուսանողների վրացական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելուն նպաստմանը:

«Արտոնյալ քաղաքականություն» ինտերմշակութային կրթությանը և ինտեգրմանը նպաստելու համար

Ինտերմշակութային հարաբերություններին և էթնիկ փոքրամասնությունների կրթություն ստանալուն նպաստելու նպատակով, Վրաստանի Կառավարությունը 2006 թվականից գործարկել է այսպես կոչված «Արտոնյալ քաղաքականության» ծրագիր: Ծրագիրը ենթադրում էր համազգային քննություններին միայն ընդհանուր ունակությունների աղբյուրներեն, հայերեն, օսերեն և արխագերեն լեզուներով հանձնած թեստերի արդյունքների հիման վրա դիմորդների ընդունում բարձրագույն ուսումնական հաստատություններ: Արտոնյալ քաղաքականության կանոնակարգի համաձայն, «վրաց լեզվի կրթական ծրագիրը պետք է ապահովի այն, որ մեկամյա դասընթաց ավարտելուց հետո ուսանողների մոտ բավական չափով լինեն զարգացած լեզվական և հաղորդակցական կարողությունները՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասախոսությունները վրացերեն լսելու, հասկանալու և հաղորդակցություն հաստատելու համար ինչպես դասախոսուսուցիչների, այնպես էլ համակուրսեցիների հետ՝ սա է հաջողակ սոցիալական և անհատական

հարաբերությունների նախադրյալը (Քաղաքականության կանոնակարգը):

Վրաց լեզվի նախապատրաստական կրթական ծրագիրն ավարտելուց հետո ուսանողն իրավունք կունենա ուսումը շարունակել բակալավրիատի, դիպլոմավորված բուժաշխատողի / ատամնաբույժի/ անասնաբույժի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրերում միայն վրաց լեզվով:

Պետության բազմամշակութային կրթական քաղաքականությունը որոշակի արդյունքներ է ունեցել: «Արտոնյալ քաղաքականության» ծրագրի մասին ոչ վրացալեզու դպրոցներում և բնակչության մեջ տեղեկությունների լայն տարածումը նպաստեց նշված ծրագրի շրջանակներում ազգային քննությունների հայտագրված ոչ վրացալեզու դիմորդների թվի աճին: 2008 թվականի համեմատ դեռևս 2010 թվականի քննություններին հայտագրված ադրբեջանալեզու դիմորդների թիվը 250-ից աճեց մինչև 335-ը (34%-ով), հայալեզուների դիմորդներինը՝ 113-ից մինչև 253-ը (123,8%) (Շ.Տաբատաձե, 2011), իսկ 2012 թվականին ոչ վրացալեզու ուսանողների համար հատկացված էր ընդամենը 2242 քվոտայով տեղ և հայտագրվեց 1187 ոչ վրացալեզու աշակերտ (www.naec.ge): Վերջին տվյալները նախորդ տարիների համեմատ ոչ վրացալեզու աշակերտների Վրաստանում ինտեգրման աճած մոտիվացիայի մասին է խոսում: Տվյալ ծրագիրը ոչ վրացալեզու ուսանողին հնարավորություն է տալիս սովորել Վրաստանի ցանկացած հավատարմագրված համալսարանում: Թեպետ, ոչ վրացալեզու ուսանողների ամենամեծ քանակը բաշխվում է երեք համալսարանների վրա, սրանք են՝ Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարան, Իլյայի

պետական համալսարան և Թբիլիսիի բժշկական համալսարան: Ոչ վրացալեզու ուսանողները բոլոր ուսումնական հաստատություններում սովորում են միևնույն ծրագրով: Տարբեր ծրագիր ունի միայն Իլյայի պետական համալսարանը (Իլյայի պետական համալսարանի վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցման ուսումնական պլան, 2010): Տարբերությունը, նախ՝ արտահայտվում է ծրագրի կառուցվածքով: Համեմատության նպատակով առաջարկում ենք Իլյայի պետական համալսարանի և Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարանի վրաց լեզվի նախապատրաստական ծրագրի ուսումնական պլաններից հատվածներ.

**Իլյայի պետական համալսարան
Ծրագրի կառուցվածքը**

Լիիրավ ուսանողի կարգավիճակ կշնորհվի ուսանողի կողմից ծրագրով նախատեսված դասընթացն անցնելու հիման վրա: Ուսանողը պետք է հավաքի 60 կրեդիտ՝ հետևյալ դասընթացներն անցնելու հետևանքով.

- Վրաց լեզվի ինտեգրված դասընթաց 1 և 2 - 24 կրեդիտ (12 + 12)
- Լեզու և միջմշակութային երկխոսություն - 6 կրեդիտ
- Մեդիադասընթաց 1 և 2 - 12 կրեդիտ (6 + 6)
- Մինինախագծեր - 6 կրեդիտ
- Ոլորտային լեզվի դասընթաց - 6 կրեդիտ
- Քննություններին նախորդող դասընթաց - 6 կրեդիտ

Եթե ուսանողը որևէ այս դասընթացի իրազեկությունները բավարարում է, նա կարող է անցնել ծրագրի շրջանակներում առաջարկված այլ կամընտրական դասընթացներ:

Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի Ուսումնական դասընթացի անվանում	Կրեդիտների քանակ
Վրաց լեզվի խոսողական գործառնություններ (ա. խոսել, բ. լսել, գ. կարդալ, դ. գրել) – 1	20
Վրաց լեզվի խոսողական գործառնություններ (ա. բանավոր խոսք, բ. կարդալ, գ. գրել) – 2	15
Վրաց լեզվի գործնական քերականություն - 1	5
Վրաց լեզվի գործնական քերականություն - 2	5
Վրաց լեզվի հաղորդակցական ասպեկտներ - 1	5
Վրաց լեզվի հաղորդակցական ասպեկտներ - 2	5
Վրաց լեզվի ուղղախոսություն և ուղղագրություն	5

Յուրաքանչյուր քննարկված ծրագիր ծառայում է լեզվական չորս՝ գրելու, կարդալու, խոսելու և լսելու կարողությունների զարգացմանը: Ինչպես երևում է սխեմայից՝ Իվանե Ջավախիշվիլիի անվան համալսարանի ծրագիրն ըստ կարողությունների զարգացման առանձին-առանձին ուղղությունների է բաժանված: Մյուս հակառակ, Իլյաունի ծրագիրն ինտեգրված է և յուրաքանչյուր ուղղությունն ընդգրկում է բոլոր չորս լեզվական կարողությունների զարգացում: Իլյաունի ծրագրի համաձայն, ոչ վրացալեզու ուսանողները համագործակցում են վրացի ուսանողների հետ, ինչը նախատեսում է վրաց լեզվի ինտեգրված դասընթացը: Վրացի ուսանողներն օգնում են էթնիկ փոքրամասնություններին տարբեր նախագծեր կազմելու, նյութեր հայթայթելու հարցում: Վրացի ուսանողներին այս օգնությունը կրդետների որոշակի քանակ է բերում: Համապատասխանաբար, երկու կողմերն էլ մոտիվացված են, և արդյունքն էլ՝ էֆեկտիվ (Թ.Քվաճրելիշվիլի, 2012):

Բոլորովին տարբեր է վիճակը Իվանե Ջավախիշվիլիի անվան համալսարանի վրաց լեզվի նախապատրաստական

ծրագրում: Այստեղ էթնիկ փոքրամասնությունները բաժանված են էթնիկ նշանով և տարբեր խմբերում են սովորում: Ուսումնական տեսակետից, նրանք միմյանց հետ շփում համարյա չունեն: Բացի այդ, 2011 թվականից տվյալ ծրագրի ուսանողները սովորում են իրենց համար առանձին տրամադրված մասնաշենքում: Այս փաստը ընկալվում է որպես խանգարիչ գործոն վրաց հասարակությանը նրանց ինտեգրման համար:

Տվյալ հարցի և ընդհանրապես ինտեգրման խնդրի հետ կապված զրուցել ենք վերոնշյալ ծրագրի Իվանե Ջավախիշվիլիի անվան համալսարանի ուսանողների հետ: Նրանց ևս խնդրեցինք անվանել այն դժվարությունները, որոնց հանդիպում են՝ մեծամասնության լեզվով կրթություն ստանալիս և վրաց հասարակության մեջ սեփական տեղը հաստատելիս:

Ուսանողների հետ հարցազրույցների վերլուծություն և եզրակացություն

Ուսանողները լավ գիտակցել են ինտերմշակութային կրթության կարևորությունը: Նրանք համարում են, որ սա հնարավորություն է, որը կնպաստի նրանց լրիվ հասարակական ինտեգրմանը:

Լրիվ ինտեգրման մեջ նրանք ենթադրում են լիիրավ քաղաքացիություն, լեզվի լավ իմացություն, բարձր վարձատրվող աշխատանք, հարգանք և ճանաչում հասարակության մնացած անդամների կողմից:

«Ես տնտեսագետ եմ ուզում դառնալ, վրացերեն լավ սովորել և լավ աշխատանք գտնել»: «Երբ գյուղում էի ապրում, վրացերենը լավ չէի սովորում: Այժմ Թբիլիսիում եմ ապրում: Վրացերենը լավ պետք է սովորեմ, որ ամեն ինչ այնպես կարողանամ անել, ինչպես այդ անում են վրացիները», - արտահայտում են ուսանողներն իրենց մոտիվացիան վրաց լեզու սովորելու հանդեպ: Նրանց հետ զրույցից պարզվեց, որ բնակման միջավայրի փոխելը բարձրացրել է սովորելու մոտիվացիան: Նրանք ոչ վրացալեզու դպրոցներում էին սովորում, միջավայրն էլ ոչ վրացալեզու էր: Աշակերտներն ամենօրյա կյանքում չէին նկատում վրաց լեզվին և մշակույթին ծանոթանալու անհրաժեշտությունը: Այսօր նրանց հետաքրքրությունները, միջավայրը փոխելու հետևանքով, որոշ չափով փոխվել են: «Ինչ Թբիլիսի եմ տեղափոխվել, վրացերեն եմ խոսում, խանութում, փողոցում, երբ որևէ բան եմ ուզում հարցնել, կարդալ: Դպրոցում վրացերենը միայն վրաց լեզվի դասի ժամանակ էր անհրաժեշտ», - ասում է ոչ վրացալեզու ուսանողը:

Ոչ վրացալեզու ուսանողների մեծ մասի համար ցանկալի է, որ համալսարանում ուսումնական միջավայրը ավելի վրացերեն լինի: Ինչպես արդեն նշեցինք «Արտոնյալ ծրագրի» շրջանակներում Իվանե Ջավախիշվիլիի անվան համալսարանում ոչ վրացալեզու աշակերտները՝ ադրբեջանցիները և հայերը, համալսարանի մեկ ուսումնական

մասնաշենքում են սովորում: Այստեղ չկան վրացալեզու ուսանողներ: Բացի դասախոսություններից, նրանք չեն լսում վրացերեն խոսք, դասամիջոցներին իրար հետ մայրենի լեզվով են խոսում: Էթնիկ հայերն ու ադրբեջանցիները դժվարանում են նաև միմյանց հետ շփվել: Նրանք չգիտեն միմյանց լեզուները, իսկ վրացերենի և այլ ընդհանուր լեզուների պակաս տիրապետման պատճառով խուսափում են շփվելուց: Ըստ ուսանողների, լավ կլիներ, եթե համալսարանում վրացալեզու ուսանողներ ևս սովորեին: Այս ճանապարհով ավել վրացի ընկերներ ձեռք կբերեին, միմյանց հետ վրացերեն կփոխանակեին մտքերը: Դա նրանց կօգներ միմյանց մասին տեղեկություններ ստանալ, ավելի լավ ծանոթանալ միմյանց ավանդույթներին և մշակույթին: Բացի այդ, նրանց ցանկությունն է ծանոթանալ վրացական ուսանողական կյանքին, վարվել այնպես, ինչպես վրացիներն են վարվում:

«Դասամիջոցին դուրս ենք գնում միայն անհրաժեշտության դեպքում: Մենյակում զրուցում ենք սովորաբար, ուրիշ ուսանողների չենք ճանաչում»: Հարցին, թե նրանց ինչ կտար վրացի ուսանողների հետ ամենօրյա շփման հնարավորությունը, նրանք պատասխանեցին, որ դրանով նրանց հնարավորություն կտրվեր լավ ծանոթանալ վրաց երիտասարդների հետ, նրանք կօգնեին իրենց որոշ հիմնախնդիրներ լուծել, ինչն, օրինակ, չեն կարողանա խնդրել դասախոսից: Միասին կգնային կինոթատրոն կամ ակումբ ... «Թբիլիսիին դեռ լավ ծանոթ չեմ: Ունեմ մեկ-երկու ընկեր, իմ հարևանները: Երբ ուզում եմ որևէ տեղ գնալ, նրանց եմ հարցնում », - նշում է մի տղա ուսանող

և ցանկանում է ավելի շատ վրացիների հետ ընկերություն անել:

Կարևոր է նաև նրանց նկատմամբ վրաց հասարակության տրամադրվածության ընդհանուր գնահատումը: Նրանք նշում են, որ լեզվի չիմացությունը նրանց հաճախ անհարմար իրավիճակների մեջ է դնում: Անհարմար իրավիճակներ են ստեղծվում ամենօրյա կյանքում. հաճախ դեպքեր են ունեցել, երբ խանութում որևէ բան գնելիս կամ տրանսպորտով երթնելիս, վրացերեն վատ խոսելու պատճառով, նրանց ծաղրել են: Թեպետ, միևնույն ժամանակ նշում են, որ վրացի հարևանները նրանց հանդեպ բարյացակամ են, չեն խուսափում իրենց հետ շփվելուց: Առանձնապես նշում են հասակակիցների իրենց կողքին լինելն ու աջակցելը: «Տարիքով ինձանից մեծերի հետ դժվարանում եմ խոսել, նրանք հաճախ հարցնում են, թե ինչ ազգության եմ: Դրա պատճառը հավանաբար այն է, որ վրացերեն վատ եմ խոսում: Ընկերություն եմ անում իմ հասակակից տղաների հետ»:

Անվանված հիմնախնդիրների նախատեսմամբ, նշանակալի է, որ

ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ունենան ավելի շատ վրացական միջավայր, և վրացիները նրանց ընդունեն որպես իրենց հասարակության, իրենց ամենօրյա կյանքի բաղադրամաս: Վրացական պետության և վրաց երիտասարդների ընդհանուր բարյացակամ վերաբերմունքը էթնիկ տարբերության նկատմամբ առաջընթաց քայլ է դեպի հանդուրժողականություն: Դրա պատճառ կարող է լինել ինչպես ընդհանրապես հանդուրժող վերաբերմունքի զարգացման միտումը էթնիկ և կրոնական բազմերանգության հանդեպ, այնպես էլ Վրաստանի էթնիկ և լեզվական տեսակետից բազմերանգ անցյալը: Խաղաղ համագոյակցության և ազգային բազմերանգության պահպանման տեանկյունից նշանակալի է, որ ամեն իրավասու հիմնարկ, յուրաքանչյուր քաղաքացի օգնի և օժանդակի Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնություններին հանրայնացման հարցում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Դիմորդների հայտագրման արդյունքները: Քննությունների ազգային կենտրոն, 2012 [Online] Available: <http://www.naec.ge/erovnuli-erovnuli-gamocdebi/ertiani-erovnuli-gamocdebi-siakhleebi/2754-2012-tslis-erthiani-erovnuli-gamocdebi-abiturienttha-registraciis-shedegebi.html?lang=ka-GE> [Accessed 9 Juli 2012]
- Տաբատաձե, 2010 – Շ.Տաբատաձե, Երկլեզու կրթության ծրագրերը, Ինչ ընտրություն ունեն Վրաստանում հանրային դպրոցները: Ամսագիր «Երկլեզու կրթություն» №1. [Online] <http://www.bilingualeducation.ge/articles/id/13> [Accessed 18 April 2012]
- Քվաճրելիշվիլի, 2012 – Թ.Քվաճրելիշվիլի, Ոչ վրացալեզու ուսանողների ինտեգրման հիմնախնդիրները բարձրագույն դպրոցի նախապատրաստական ծրագրի շրջանակներում: Մագիստրոսական աշխատություն:
- Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը, 2009 [Online] Available <http://diversity.ge/geo/concept.php> [Accessed 21 November 2012]

Հանդուրժողականության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործողությունների պլանի կատարման մշտադիտարկման արդյունքները: 2010/2011, Ժողովրդական պաշտպանի գրասենյակին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհուրդ:

Շոֆտհալեր, 1984 - Schoefthaler, T. (1984)՝Multikulturelle und Transkulturelle Erziehung:Zwei Wege zu kosmopolitischen kulturellen Identitaeten՝[Online] International Review of Education, Vol. 30, N 1, pp.11-24. Available:www.jstor.org/discover/10.2307/3444200[Accessed 15 November 2012]

Elene Jajanidze

Center for Civil Integration and Inter-Ethnic Relations

The Problem of Development civil integration in Georgia

ABSTRACT

The article dedicates to present the importance of civil integration and intercultural education. The article presents the problem of civil integration for non-Georgian ethnic minorities. The paper suggests several difficulties and methods to overcome the problems. The paper also presents the importance of intercultural education and activities of social integration in Georgia. At last, the article suggests the analyses of non-georgian-student's appearance about difficulties by integration process in Georgia